

ՄՅՏԱԿԱՆ ԼՈՒԹԵԼՆ ՏՈՒՆԸ.

(ՄԻ ՓՈՐՁ ԴԱՆԻԵՐԷՆԻՑ).

ՆՈՐԱՆԴԻԱՅԻ զեղածիծաղ և ծաղկափրթիթ դաշտերում յանկարծ տեսնում էք մի տխուր շէնք, որ քարացած ջոկնվում է շրջապատող բնութիւնից: Այդ կուտակուած, երկարածիգ շէնքերը իւր բազմաթիւ պատուհաններով այն տպաւորութիւն է գործում, իբր թէ այդ տեղ անդուլ վաստակը օր ու ցերեկ աշխատում և գործում է հարստութիւն դիզելու համար. սակայն ժամատան բարձրաբերձ աշտարակը, որ հեռուից օդի մէջ նշմարվում է, մի նշան կարող է լինել, թէ այս յարկի տակ հիւրընկալածները անշուշտ ուրիշ հողս ունին, քան երկրաւոր բարեբեռնի հետամտութիւն: Այդ տարածութեան չորս կողմը իշխում է խոր լուսթիւն: Միայն արածող արջառի խուլ բառաչը կամ հեռաւոր եկեղեցու զանգերի ծանրաթխած դողանքները ընդհատում են այդ ահաւոր հանգարտութիւնը: Այդ տեղ լուսկեաց կրօնաւորների թաղաւորութիւնն է, իսկ մենացած շէնքը իրանց վանքն է *.

Հաղիւ թէ երբ և իցէ օտարի ոտքը կոխում է այս մշտական լուսթեան տան շէմքը. հաղիւ թէ երբ և իցէ այդ կրօնաւորների խորհրդաւոր կայանից որ և է լուր հասնում է դուրսը, մարդկային հրապարակը: Քրանսիացի ուսումնական Գիւլբուրդի շնորհին ենք պարտական, որ հնար ունինք մեր ընթերցողներին հաղորդել այդ արեւդաների տարօրինակ կենցաղալարութիւնը: Եւ իբր զարմանալի է այդ կեանքը. կարծես թէ մի անծանօթ հեռու աշխարհք ենք մտնում:

Լուսկեացիների միաբանութեան հաստատութիւնը շատ հին ժամանակներից է սկսուել: Երկոտասաներորդ դարում սիւտեքսական միաբանութեան մի ճիւղը Լա Տրապպ արքայութեան մէջ հաստատուեցաւ, որի 60 անդամները Փարիզի շուայտութիւններից յետոյ պէտք է վարէին տրապիստների խոտակրօնութիւնը:

Այնուհետեւ Նորմանդիայի կրօնաւորների միաբանութիւնը ստուարացաւ, ծաւալուեցաւ և տարածուեցաւ զանազան աշխարհներում: Միայն Քրանսիայում 20-ից աւելի վանք կայ. Անգլիան, Աւստրիան, Իտալիան, Հոլլանդը և Գերմանիան ունին երեք երեք, Սպանիան՝ երկու վանք, իսկ մնացած 14 վանքերը ցրուած են աշխարհի ամենայն կողմերում: Ներկայումս հաշուում

են աւելի քան 3400 լուսկեացիներ, որ տեղաւորուած են երկրի չորս ծագերի 75 տնկրում:

Այս ամենախոտակրօն լուսկեցութեան ամբողջութիւնը հիմնուած է երկաթէ 3 խաւսի վերայ, որք են՝ միաբանական կեանք, միաբանական աշխատութիւն և անբաժնելի մշտական լուսթիւն:

Խիստ և ծանր պիտի լինի լուսկեացի կեանքը: Առաւօտեան ժամի 2-ին սկսվում է վաստակաւորի գործը: Երբ որ համբ զանգը հնչում է, եղբայրները վեր են կենում և իրանց գորշ ու սպիտակ պարեզօտը հագնւն՝ անխօս շտապում են երկար միջանցքներով դէպի մատուռը: Ամէնօրեայ ժամասացութիւնը կատարելուց յետոյ, իւրաքանչիւրը գնում է իւր գործին, ինչ որ իրան վիճակուել է: Վասն զի լուսկեացը բնահայեցողական կեանք չի վարում. նա ժիւր է և միշտ իւր ձեռքն ու մարմնական ոյժերը աշխատեցնում է: Միմիայն անձնական խնամքին թողնուած, նոքա ամէնքը պարտաւոր են իրանց քրտնքով հայթայթել ամենայն ինչ, որ պէտք ունին իրանց համեստ ապրուստի համար: Վանքի եկեղեցին շրջապատուած է ինը շէնքերով, որոնք կահաւորած են ամէն տեսակ արհեստաւորների նորագոյն գործընկերով: Կրօնաւորներն ունին իրանց սեպհական ջրաղացը, իրանց տպարանը, մի մեծ շոգոլադի գործարան և այլն:

Բայց ոչ ոք որոշած զբաղմունք չունի: Աշխատութիւնը կրօնաւոր—եղբայրների համար ոչ միայն ապրուստի աղբիւր է, այլ և խրատելու միջոց է, ժուժկալութեան ծանր արուեստի յարակատար վարժութիւն է:

Լուսկեացը ազատութիւն չունի կամաւ ընտրելու աշխատութիւնը. նա պէտք է պատրաստ գտնուի ամէն տեսակ զբաղման համար: Արքան հրամայում է, իսկ կրօնաւորը պէտք է անմառնչ հնազանդուի. Ով որ այսօր մի պատուական գիրք է ընդօրինակել, վաղը պէտք է ցորեն աղայ ջրաղացում. ով որ առաւօտեան ճառքնսիր է կարդացել, երեկոյիս պէտք է պարտէզը խնամէ կամ անտառում փայտ կտրէ ...

Աղքատիկ միաբանական սեղանը պէտք է նոյնպէս ի միասին վայելեն: Սեղանատան մեծ սրահում իւրաքանչիւր կրօնաւոր նստում է իւր փոքր սեղանի առաջ, Մի պատառ հաց, մի կաթիլ քամած խնձոր, մի աման ապուր, մի բանջարեղէն—այս է լուսկեացի կերակուրը: Միայն հիւանդները բացառութիւն են կազմում և կարող են միս ուտել:

Երեկոյեան ժամի 7-ին օրական տընութիւնը վերջանում է:

Անխօս արեղաները երկար շարուած գնում են իրանց ընդհանուր միաբանական ննջարանը:

* Վանքը կոչվում է La Trappe, ուսի եւ միաբանութեան անդամները կոչվում են քրապիսներ:

Սրահը մեծ և անգարդ է։ Եղբայրակիցների հատ հատ խցիկները փակելու դուռ չունին։ Ննջելու համար որոշուած է աստիտակի անկողին։ Խոտով լցրած բարձ և պարզ վերմակ։ Լուսկեացը եօթը ժամ ունի հանգստանալու համար։ Հէնց ինչպէս հագնուած է։ Նոյն շորերով պէտք է նա պառկի այդ չոր տեղի մէջ։ Եւ երբ որ կէս գիշերին դանդաղ տրուի նա վեր կը կենայ հանգարտ և անխօս։ Որպէս զի դարձեալ սկսէ իւր երկար ու ձիգ, տաժանելի աշխատութիւնը։

Լուսկեացը ահա այսպէս երբէք մենակ չէ, բայց և այնպէս միշտ մենակ է։ Պատն զի նա չի կարող իւր խորհուրդը յայտնել։ Նորա լեզուն կաշկանդուած է, նա ուխտել է յաւիտենական լուսթիւն։ Ո՛հ ինչ դարհուրելի պիտի լինի այս լուսթիւները ուր որ եղբայրակիցները միասին են միշտ, առաւօտեանից մինչև երեկոյ, ժամատացութեան և աղօթի ժամանակի դորձատան մէջ և դուրսը՝ դաշտում կամ անտառում։ Լուսկեացներն երբէք մենակ թողնուած չեն։ միշտ միասին են իրար հետ։ Խուճը խուճը հաւաքուած գնում են իրանց վիճակուած բանին։ Երբ որ առաւօտեան ժամը վերջանայ, այդ լուռ դէմքերը վանքից դուրս են գալիս և անմուռնչ ձեռնարկում են իրանց դորձը։ Կողքը կողքին յենած, մէջքը մէջքին տուած աշխատում են ժիւր կերպով, տարին տաններկա ամիս, այսօր այնպէս, ինչպէս և ամենայն օր։ ամառ և ձմեռ, ցուրտ ու բուքին, անձրևին և արեգական լուսով. դրա միասին են ապրում առաւօտեանից մինչև երեկոյ, միաբանական դորձի համար աշխատում են եղբայրաբար, ողևորուած են միևնոյն գաղափարով, շնչում են մի և նոյն օդը, տառապում են մի և նոյն պատերի մէջ, կրում են մի և նոյն ուրախութիւնը և տրտմութիւնը։—բայց և այնպէս նոցանից ոչ ոք չի ճանաչում միւսին, ոչ ոք չգիտէ, թէ ուրիշի սիրտը ինչ վշտով է մաշվում, թէ այն տեղ ինչ հոգս ու ցաւ կայ, ոչ ոք չի կարող իւր բնկերի կրածը դիտել։

Ամէն մի անհատի միտքը յաւիտենական գաղտնիք է միւսների համար։ Ո՞վ կարող է ասել, թէ այս մարդկանց ինչն է գրգռել, որ աշխարհից փախել են և եկել են պատապարտելու այս խաղաղ նաւահանգիստը, ուր որ այլ ևս չի հասնում կեանքի աղմուկը, ուր որ դադարել է ամենայն փոթորիկ։ Ո՞վ գիտէ, թէ դրա ուստի են եկել, և ինչո՞ւ են եկել խաղաղութիւն փնտռելու, այս յաւիտենական խաղաղութիւնը ...

Սոցա բերանից մի բառ անգամ երբէք դուրս չի գալիս։ Բնաւ չի լսվում մարդու ձայն, բնաւ մի խօսակցութիւն։ Եթէ մարդս պահանջ զգայ իւր խնդութիւնն ու ցաւը յայտնելու,—լուսկեացը պարտաւոր է անմուռնչ մնալ. եթէ

մարդու բերանը ակամայ բացուելու ձգտի աշխարհի գեղեցկութեան առաջ, բնութեան հրաշալիքների առաջ, լուսոյ և արեգական ազդեցութեան ներքոյ,—լուսկեացը պարտաւոր է անխօս մնալ. եթէ մարդու սիրտը պատառուելիս ինի վշտից ու տանջանքից —լուսկեացը ձայն ծագուն չպէտք է հանէ։

Միայն իւր արեւայի և իւր մեծաւորի առաջ հրաման ունի կարել իւր լուսթիւնը. եթէ ուղում է եղբայրակիցի հետ խօսել, պարտաւոր է թոյլտուութիւն հայցել, բայց այն էլ այնչափ նուազ դէպքերում է արվում, որ խնդրելու ցանկութիւնը իսպառ կորչում է ...

Ինչպէս որ կեանքն է եղել, այնպէս է և մահը։ Մահուան ժամանակ ևս լուսկեացն իւր հազուադէպ հանում։ Երբ որ միաբանակցի վերջին ժամը գարկի, մեռանդոյն հանգստացնում են մօթրով ցանած խաւի վերայ, այս է լուսկեացի պատանքը։

Կարգաւորները իւրեանց վախճանը այսպէս տեսնում են իւրեանց աչքով. և նոքա լուռ տանում են մահը, ինչպէս լուռ տարել էին կեանքը։ Բայց բոլոր կրօնաւորները հաւաքվում են հանգչող եղբայրակցի շուրջ, միշտ դարձեալ լուռ, միշտ դարձեալ աղօթելով։

Իսկ երբ ծանր ժամն էլ վերջանայ, լրանայ, հանգուցեալին իջնեցնում են հողը, երեսը անծածք, և կրկին այն շորերով, ինչ որ կենդանին հագին է ունեցել հանապազօր։ Դիակը դադարի մէջ չի դրվում։ Միայն փոքրիկ սպիտակ խաչերը ցոյց են տալիս լուսկեաց կրօնաւորների յաւիտենական հանգստարանը։

Անշուշտ այս մարդկանց աչքում մահը դարհուրելի չպէտք է լինի, մահուան ահը որտեղ կուրծք պիտի լինի, Այն օրուանից, երբ որ նոքա իրանց ոտքը կոխում են գերեզմանական լուսթեան տան շէմքը, նոցա յետեւից արդէն իսկ չքանում է կեանքը իւր բոլոր ուրախութիւններով և հրապոյրներով, իսկ մահը սփռում է սև ոտուէրներ նոցա ճանապարհի վերայ։ Կեանքի քաղցրութիւնները վայելելուց նոքա զրկվում և մեռնում են շատ առաջ, քան երբ որ վերջին շունչն են փչում և ընդ միշտ իրանց շրթունքով հառաչում և արտաբերում են այն աղատարար բառը, որով մարդ արտայայտում է իւր բոլոր զպացմունքն ու մտածմունքը, իւր չարչարանքներն ու երանութիւնները։ Արդեօք ի՞նչ սոսկալի չարաբախտութեան են հանդիպել այս ողորմելի մարդիկ իրանց կեանքում, որ սիրտ են առել ժամանակից առաջ թաղուելու յաւիտենական լուսթեան մէջ կենդանի մարմնով։

Ս. Մ.

